ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/220

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21» գնանշման հարցման ընթացակարգ, հակահրդեհային գույքի և սարքավորումների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21-01/112»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14068-2021 գրությամբ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 26.08.2021թ.-ի Ե/13/2256-21 գրության հիման վրա, 01.09.2021թ.-ին «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 01.09.2021թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.08.2021թ.-ի թիվ 450-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 06.09.2021թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

08.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/220 համարի ծածկագիրը:

16.09.2021թ.-ին, 01.10.2021թ.-ին և 06.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 01.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.10.2021թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 26.08.2021թ.-ի Ե/13/2256-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

««Հակահրդեհային գույք և սարքավորումներ» ապրանքների ձեռքբերման նպատակով ս/թ ապրիլի 6-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ԿԱ ԸՆԴ ԿՈ ԹՐԱՅԴ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. մայիսի 12-ին կնքվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21-01/112 պայմանագիրը, որը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ 2 չափաբաժնի մասով, քանի որ «ԿԱ ԸՆԴ ԿՈ ԹՐԱՅԴ» ՍՊԸ-ի կողմից ապրանքը չի մատակարարվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.09.2021թ.-ին գրությամբ դիմել է «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14068-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 28.09.2021թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի արդյունքում «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի միջև 2021թ. մայիսի 12-ին կնքվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21-01/112» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին

մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատես-ված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7. կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրացուցային օրից ավելի:

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին ուղղված 20.07.2021թ. թիվ Ե/13/1880-21 գրությամբ (կցվում է) «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետը:

Այնուհետև, «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավա-րության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 26.08.2021թ. գրությամբ ներկայացրել է «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը

դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՅ-ԼՕ-2021/220 ընթացակարգը նախաձեռնվել է 01.09.2021թ.՝ հիմքում դնելով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2021թ. պայմանագրի միակողմանի մասնակի լուծումը /տես 20.07.2021թ. թիվ Ե/13/1880-21 գրություն/, այսինքն՝ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 20.07.2021թ., սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 26.08.2021թ. հիմքում դնելով այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել՝ «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի միջև 2021թ. մայիսի 12-ին կնքված « ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21-01/112» ծածկագրով պայմանագիրը 20.07.2021թ. միակողմանի լուծել:

Այնինչ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 20.07.2021թ.–ին և միայն օրենսդրությամբ նախատեսված ժամկետի խախտմամբ Պատվիրատուն որոշում է կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մասնավորապես, հիմքերը ուղարկելու վերջնաժամկետ է հանդիսանում 27.07.2021թ. (վերջին 5-րդ աշխատանքային օրը), սակայն Պատվիրատուի կողմից հիմքերը ուղարկվել են միայն 26.08.2021թ., այսինքն սահմանված ժամկետի խախտմամբ, գրեթե մեկ ամիս անց:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր /ՍՅ-ԼՕ-2019/233 և ՍՅ-ՆԳ-2019/195/: Օրինակ՝ թիվ ՍՅ-ԼՕ-2019/233 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.–ին թիվ ՊՆ/02/2630-2019 գրությամբ: Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ.–ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.11.2019թ.–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.–ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից ...:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել:»

Տեղեկացնում ենք, որ Կարգի 45-րդ կետով նախատեսված 5 աշխատանքային օրվա ժամկետը խախտելու փաստի վերաբերյալ նման մեկնաբանությունը ներառվել է նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից կայացրած ՍՑ-ԼՕ-2019/180 և ՍՑ-ԼՕ-2019/187 ծածկագրով ընթացակարգերի վերաբերյալ ընդունված որոշումների մեջ, որի արդյունքում ՍՑ-ԼՕ-2019/180 և ՍՑ-ԼՕ-2019/187 ծածկագրով ընթացակարգերի մերժվել են և «Գրիտիգ» ՍՊԸ-ն և «Արտ Պլաս» ՍՊԸ-ն չեն ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-ԼՕ-2021/220 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի միջև 12.05.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-

ԳՀԱՊՁԲ-58/21-01/112» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի Պայմանագրի կնքման օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 23.08.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/13/1880-21 ծանուցման համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «հակահրդեհային գույք և սարքավորումներ» ապրանքների ձեռքբերման նպատակով ս/թ ապրիլի 6-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ.-ի մայիսի 12-ին կնքվել է թիվ 01/112 պայմանագիրը՝ 3 064 802,4 (երեք միլիոն վաթսունչորս հազար ութ հարյուր երկու ամբողջ չորս) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված CP 660 մակնիշի հակահրդեհային փրփուրը, որի ընդհանուր գինը կազմում է 1 364 882,4 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար ութ հարյուր ութսուներկու ամբողջ չորս) ՀՀ դրամ, «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել: Տեղեկացրել են, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի հետ 2021թ.-ի մայիսի 12-ին կնքած թիվ 01/112 պայմանագիրը 2-րդ չափաբաժնի մասով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14068-2021 գրությամբ «Կա ընդ Կո

Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած

անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի միջև 12.05.2021թ.-ին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21-01/112» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի Պայմանագրի կնքման օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 23.08.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/13/1880-21 ծանուցման համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «հակահրդեհային գույք և սարքավորումներ» ապրանքների ձեռքբերման նպատակով ս/թ ապրիլի 6-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ.-ի մայիսի 12-ին կնքվել է թիվ 01/112 պայմանագիրը՝ 3 064 802,4 (երեք միլիոն վաթսունչորս հազար ութ հարյուր երկու ամբողջ չորս) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված CP 660 մակնիշի հակահրդեհային փրփուրը, որի

ընդհանուր գինը կազմում է 1 364 882,4 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար ութ հարյուր ութսուներկու ամբողջ չորս) ՀՀ դրամ, «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել: Տեղեկացրել են, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի հետ 2021թ.-ի մայիսի 12-ին կնքած թիվ 01/112 պայմանագիրը 2-րդ չափաբաժնի մասով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 20.07.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 23.08.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն

ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Անդրադառնալով Մասնակցի կողմից Բողոքներ քննող անձին դիրքորոշմամբ ներկայացված փաստական և իրավական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը գտնում է այն անհիմն հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Պայմանագրի 8.9-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ մատակարարման պայմանագիրը համարվում է լուծված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Սույն դեպքում Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է Պայմանագրի 8.9-րդ կետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջը, այն է՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 23.08.2021թ.-ին հրապարակվել է Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/13/1880-21 ծանուցումը, և ապա 26.08.2021թ.-ին թիվ Ε/13/2256-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում առկա՝ պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ փաստական հանգամանքը կարող էր առաջանալ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման հրապարակման հաջորդող օրվանից, որպիսի պայմաններում Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված ժամկետները կարող են հաշվարկվել Պայմանագրի 8.9-րդ կետում առկա գործողությունների պատշաճ կատարմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14068-2021 գրությամբ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/220 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**